«ՀԱՍԿ» Հայագիտական Տարեգիրք Թ. Տարի

1997-2001

Երկար սպասումից յետոյ, 2001 թուին լոյս տեսաւ «Հասկ» Հայագիտական Տարեգրքի 9-րդ հատորը, որն իր մէջ ընդգրկում է 1997-2001 թուականները։

Տարեգիրքը նուիրուած է հայերի կողմից քրիստոնէութեան ընդունման 1700 -ամեակին, որը տպագրուել է մեկենասութեամբ Գալուստ Կիւլպէնկեան հիմնարկութեան։ Ունի 536 էջ եւ 20x28 ս.մ. ծաւալ։

Հատորը բազմանիւթ եւ բովանդակալից է, այնտեղ կան նիւթեր նուիրուած կրօնին, աստուածաբանութեան, հայ երաժշտութեան, Հայկական կիլիկեան դրամներին, հայերէն գրչագրերին, հայկական մանրանկարչութեան, որմնանկարչութեան, պատմական յօդուածներ, գրախօսականներ եւ այլն։

Տարեգիրքը բացւում է Արամ Ա. Վեհափառի «Ցառաջաբան»ով, ուր երեք կարեւոր կէտերով ընդգծում է կատարւում հայագիտութեան եւ հայ դպրոցներում ու մշակութային կենտրոններում այն աւելի զօրացնելու եւ ծաւալելու համար։

«Երկու խօսք»ը պատկանում է Տարեգրքի խմբագիր Շահան Ծ. Վրդ. Սարգսեանին, սկզբում յօդուածներ կան նաեւ երանաշնորհ Գարեգին Ա. Կաթողիկոսի եւ Արամ Ա. Վեհափառի դեռեւս աբեղայ եղած ժամանակուայ գրուածներից։

Ինչպէս յիշուեց, Տարեգիրքն ունի բազմապիսի նիւթերով յօդուածներ, որոնք բոլորն էլ հետաքրքիր եւ ուսանելի են, յատկապէս մեր բանասէրների համար, դժբախտաբար հնարաւոր չէ այս կարճ տողերի մէջ անդրադառնալ իւրաքանչիւրին, որտեղ յօդուած ունի նաեւ Կորիւն Սրբազանը, Յովհաննէս Վարդապետի Եւրոպայից բերած տպամեքաղների (քլիշէների) եւ դրանց նմա-

նութեամբ Սբ. Ամենափրկիչ վանքում եւ Սբ. Բեթղեհեմ եկեղեցում եղած որմանկարների մասին։

Մի յօդուած ունի նաեւ տողերիս գրողը, որը վերաբերւում է իր ունեցած մի քանի գրչագրերին։

Հետաքրքիր յօդուածներից է նաեւ Վ. Քէշիշեանի (էջ 255-269) «Հալէպը հայ գրչութեան կենտրոն»ը ուր երկարօրէն խօսում է Հալէպում գրուած գրչագրերի մասին։ Այստեղ միջանկեալ ասենք որ Նոր Ջուղայի վանքի գրչագրերի հաւաքածոյի մէջ եւս կայ Հալէպում գրուած մի գրչագիր 1649 թուի, «Արուեստ ճարտասանութեան» խորագրով։ Իսկ Հալէպում գրչագրող Ստեփանոս Ջուղայեցու մասին, յիշուած է Ն. Ջ. գրաչագրցուցակի Ա. հատորում, թիւ 573 (էջ 847)։ Նաեւ իր մասին աւելի լայն ձեւով խօսուել է մեր «Գրչութեան արուեստը Նոր Ջուղայում» աշխատութեան մէջ (էջ՝ 55-60), որի յիշատակարանը բերուել է տողատուած ձեւով, որ կայ նաեւ Հալէպում գրուած գրչագրի մէջ։

Նոր ոյժ ու կորով ենք մաղթում Տարեգրքի խմբագրութեան իրենց մեր գրականութեան բերած օգտակար եւ գնահատելի աշխատանքի համար։

ԼԵՒՈՆ ՄԻՆԱՍԵԱՆ
ՆՈՐ ՋՈՒՂԱ